# Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

## ՓԱՐԻԶԻ ՊԱՌԱԿՏԻՉ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ

---

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԿԷՏԵՐԸ

### ՓԱՐԻԶԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ՔԱՅԼԵՐԸ

*Անոնք միայն իրենց ամէնէն ամօթալի խարդաւանքը, երբ չեն խղճահարիր յայտարարելու թէ՝ «15 հոգիներ ապօրինի ... խմբակի մը անուան փոխանցուած է Միութեան աւանդ գանձը, շուրջ 13 միլիոն տոլար ...»։ (Անհնազանդութիւն, էջ 30)։*

*Նախ, բոլորովին* սխալ է թէ 15 հոգիներէ բաղկացած Ամերիկեան Խորհուրդի մը ձեռամբ եկած է։ Այդպիսի բան գոյութիւն չէ ունեցած բնաւ եւ չունի։

*Միացեալ Նահանգներու մէջ կայ այդ երկրին ու շրջանակին յատուկ տեղական ընկերակցութիւններ, բազմահազար անդամներով, կազմակերպուած՝ Սուրիոյ, Եգիպտոսի, Յունաստանի եւայլն, տեղական մարմիններուն նման։*

*Եւ* բոլոր *այդ* տեղական ընկերակցութիւնները եւ անոնց անդամները, *մաս կը կազմեն Հ. Բ. Ը. Միութեան մէկ եւ անբաժանելի Մայր Ընկերակցութեան, որ այսօր ստացած է ամերիկեան բարոյական անձնաւորութիւն, եւ կը մասնակցին* բոլորն ալ անխտիր *անոր Ընդհանուր Ժողովներուն, ամերիկեան օրէնքը պահանջելով այդպիսի հաստատութիւն եւ միասնականութիւն մը։*

*Կեդրոնական Վարչութիւնն է միայն որ կը բաղկանայ 15 անդամներէ, վարելով ընդհանրական Միութիւնը եւ միանգամայն մարմին տալով Զաւկերերականին։*

*Եւ Կեդր. Վարչ. ժողովի այդ 15 անդամները ամէն տարի մասնակի կերպով եւ ընտրութեամբ կը վերանորոգուին Ընդհ. ժողովին կողմէ եւ կը մատակարարեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունին արձանագրուած հարստութիւնը, իբր անոր ժամանակաւոր վարիչները։*

*Եւ գիտենք ընտրող այդ Ընդհանուր ժողովը կը ներկայացնէ Հ. Բ. Ը. Միութեան համաշխարհային անդամակցութեան ձայները, Արեւելքէն մինչեւ Եւրոպա ու Ամերիկա։*

*Հարկ չենք տեսներ վեր առնելու թէ այս ժողովին ընտրութիւնները կը կատարուին* միշտ աւելի քան 2000 քուէարկուներու *մասնակցութեամբ, մինչ անցեալին Փարիզ գումարուած Ընդհանուր ժողովները առաւելագոյն* քանի մը հարիւր ձայն *միայն ունեցած են։*

*Հ. Բ. Ը. Միութիւնը իր անդամներուն ամբողջութեան ներկայացուցիչը ըլլալու ապացոյցը այնքան ակներեւ կերպով չէ տրուած որեւէ ատեն, որքան ներկայիս։ Բառին տառական իմաստով, ժողովրդավարական սկզբունքներով կառավարուող կազմակերպութիւն մըն է ան։*

*Չենք ուզեր Փարիզի 15 Ապրիլ 1962ի այդ համախմբումին վրայ աւելի ծանրանալ եւ կ՚անցնինք հետեւանքներուն։*

* * *

*Փարիզի Միջ-Մասնաճիւղային ժողովի արդիւնքէն, այսինքն իրենց անկարգապահ եւ հակա-կանոնադրական ընտրութենէն գինովցած, Եւրոպայի Յանձնաժողովը խորհեցաւ որ այլեւս դաշտը բաց էր իր առջեւ։*

*Շրջաբերական գրութիւններով, ղրկուած ամէն կողմ, անոնք լծուեցան վարկաբեկումի տխուր աշխատանքի մը Կեդր. Վարչ. ժողովին դէմ, եւ իրենց յերիւրածոյ ամբաստանագրութիւնները մաս կը կազմեն այդ գործունէութեան։ Ու այդ չէր բաւեր,* **Փետրուարի**, *այսինքն մէջ իսկ Միութեան մէկ օրկանին որուն պիտաձէն կը հայթայթուէր Կեդր. Վարչ. ժողովին կողմէ, Ապրիլ-Մայիս 1962ի թիւը հրապարակային եղելութի մը գոյնը ստացաւ ընդդէմ Կեդրոնին, իր թէ՛ ընդհանուր պարունակութեամբ եւ թէ Զարեհ Պէյ Նուպարի առաջին պատգամին անխիղճ չարագործութեամբ։*

*Այս բոլոր պատրաստութիւններ էին նոր յարձակումի մը, որ չուշացաւ, ու կ՚արժէ սա նոյնութեամբ հոս տալ իրենց Կեդր. Վարչ. ժողովին ուղղեալ 4 Յունիս 1962ի նամակը, որ մեծաբեր նմոյշ մը իրենց թղթակցական բարքերէն եւ իբր գլուխ գործոց վաւերաթուղթ մը միեւնոյն ատեն, որով իրենցիններին Անձամբ Կեդր. Վարչութիւն կը յորջորջեն ու մալ հոգեբանութեան մը, որով ինքզինքնին բարձրէն հրամաններ կ՚արձակեն ....*

digitised by A.R.A.R.@

Թիւ 81,028 Փարիզ, 4 Յունիս 1962

Մեծայարգ Տիար Նախագահ և Անդամք
A. G. B. U. Corporationի Կեդր. Վարչութեան(*)

250 Fifth Avenue
NEW YORK 1, N. Y.

Յարգելի Տեարք,

Ներկայիս պատիւ ունինք ձեզի հաղորդելու Կեդր. Յանձնաժողովիս 21 և 29 Մայիսի նիստերով առնուած որոշումները, որոնց պատճառաբանութիւնները և հիմքը կը հաղորդուին ձեր փաստաբաններուն Տեարք Միլէր և Փինկհամի, Միութեան Լոզանի փաստաբաններէն Տիար Բուշուի կողմէ:

21-5-62 — ա) Յետ այսու և մինչև որ կարելի ըլլայ կազմակերպել Միութեան իրաւատու անդամներու ընդհ. ժողովը, իր Եւրոպայի Կեդր. Յանձնաժողով-Գործադիր ժողովը կը ստանձնէ հիմնական կանոնագրի 15րդ յօդուածով Կեդր. Վարչութեան վիճակուած բոլոր իրաւասութիւնները և կը գործէ իբր Կեդր. Վարչութիւն:

բ) Պարզապէս վերջ տրուած է Միութիւնը առժամաբար մատակարարելու իրաւասութեան որ ճանչցուած էր Ամերիկայի շրջանակին Նախագահին, և ասկէ ալ ձեզի տրուած այլ փարթոս իրաւասութիւնները որ նշուած էին ձեզի ուղղեալ մեր 29 Նոյ. 1960 պաշտօնագրով:

գ) Առժամեայ Կեդր. Վարչութիւն - Գործադիր ժողովը իրաւասու է առնել այն բոլոր որոշումները որ պէտք ու պատշաճ կամ անհրաժեշտ են, վերի որոշումները գործադրել տալու, մէջն ըլլալով օրինական միջոցները, այս վերջին պարագային համախորհուրդ Միութեան Լոզանի փաստաբաններուն հետ:

29-5-62 դ) Առժամեայ Կեդր. Վարչութիւնս կ'ազդարարէ(**) որ ներկայ պաշտօնագրի ստացման վայրկեանէն իսկ դադրեցնէք ամէն գործողութիւն ելեմտական կամ ուրիշ Միութեանս բոլոր դրամական, շարժուն կամ անշարժ ստացուածքին վրայ, բացի նախապէս և գրաւոր իր հաւանութիւնը ստանալու: Սովորական պարագաներու համար կրնաք հեռագրով դիմել մեր հաւանութեան:

ե) Եթէ մինչև Յունիս 15 նամակով կամ հեռագրով «Սէնթրըլ Պօրտ» և կամ իր իւրաքանչիւր անդամը անհատաբար մեզի չյայտնէ իր պատրաստակամութիւնը գործադրելու վերի

---

(*) Ծանրակշռութենէ զուրկ չէ դիտել տալ թէ բառախաղերով Փարիզի խմբակը ի՛նչ երեւակայական իրաւունքներ կը կարծէ ունենալ եւ կամ ի՛նչպէս կը խորհի սահմանափակուած ցոյց տալ Միութեան Բարձրագոյն Ժողովին իրաւասութիւնները:

1. Մինչեւ 15 Ապրիլ 1962ի իրենց Միջ-Մասնաճիւղային Ժողովը, Փարիզի նամակները կ'ուղղուէին հետեւեալ վերնագրով. —

«Մեծայարգ Տիար Նախագահ եւ Պատ. Անդամք Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութեան»:

2. Այդ թուականէն՝ վերջ սկսան գործածել. — «Մեծայարգ Տիար Նախագահ եւ Պատ. Անդամք Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկեան Գորբորէյշընի» կամ *A. G. B. U. CORPORATION* բացատրութիւնները:

3. Իրենք գիտեն թէ *Corporation* բառը պարզապէս ընկերութիւն կամ ընկերակցութիւն կը նշանակէ, թէ Միութեան նոր կանոնագրին մէջ այդ բառը անունին իբրեւ մաս չէ գործածուած երբեք, այլ որոշապէս գրուած է թէ ընկերակցութեան անունն է՝

*ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION*
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ:

4. Նոյն խաղերը՝ Կեդր. Վարչութեան անունին համար: Երբեմն զայն կը կոչեն միայն *General Board* հայերէն գրուած նամակներու մէջ: Այս երկու բառերը պարզապէս Կեդր. Վարչ. Ժողով կամ *Conseil Central d'Administration* կը նշանակեն եւ սակայն մասնաւոր նպատակով անգլերէն այդ բառերը կը գործածեն:

Ինչո՞ւ այս ծիծաղելի խաղերը, որ կրկնուած են իրենց շրջաբերականներուն մէջ ալ: Որովհետեւ միամիտներու կարծել տան թէ ներկայ Բարեգործականը ամենեւին գիտցածը չէ, բոլորովին տարբեր բան մըն է, կամ ամերիկանացած կազմակերպութիւն մը:

5. Այս պարագան շեշտելու եւ իրենց մահրամահոր հանգամանքը ընդգծելու համար Միութեան մէջ, Ապրիլ 15ի վերոյիշեալ ժողովէն վերջ իրենց նամակաթուղթերուն վրայ կնիքով մը աւելցուցած են. — *Association de droit et de personnalite Suisse* (զուիցերիական օրէնքի ենթակայ եւ զուիցերիական անձնաւորութեամբ ընկերակցութիւն):

Ընթերցողը ցարդ գաղափար մը կազմեց այս մարդոց հետապնդած նպատակներուն մասին, եւ վերեւի յիշուած լարախաղացութիւնը բառերու հետ՝ մեկնաբանութեան չի կարօտիր:

(**) (Անգլ. **Սըմընզ**) Այս բառերը իրենցն են:

digitised by A.R.A.R.@

որոշումները, այժմէն և անվերադառնալիօրէն հրահանգուած է Միութեանս Լոզանի փաստաբաններուն որ սկսին օրինական գործողութիւններու, հանդէպ «Սանդրայ Պորտօ»ին, իր անդամներուն անհատաբար և ուրիշներու:

Եթէ, ինչպէս կը մաղթենք, ընդունիք ընթացք տալ վերի որոշումներուն, կարելի պիտի ըլլայ առեղծել փոխադարձ յարգանքի մթնոլորտ մը որ պիտի թոյլատրէ գործակցիլ ձեզի հետ տակաւին իրականացնելու համար բարեկամական լուծում մը որ պայմանագրուած էր անցեալ տարի:

Հակառակ պարագային ներկայս պիտի ըլլայ մեր վերջին հաղորդագրութիւնը և ձեր վրայ պիտի ծանրանայ պատասխանատուութիւնը այն բոլոր ծանրակշիռ քայլերուն զորս հարկադրաբար պիտի առնենք:

Յարգանքներով
Հ. Բ. Ը. Միութեան Առժամեայ
Կեդր. Վարչութեան

Ատենադպիր
Օ. ՀԱՐԲՈՒԹԵԱՆ

Ատենապետ
ՆՈՒՐՀԱՆ ՖՐԸՆԿԵԱՆ

Մարդ պարզապէս կ'ապշի ու հարց կուտայ թէ ուրկէ՞ Փարիզ ուժ կը ստանայ համարձակելու համար Կեդրոնին ուղղելու նման գիր մը . . .:

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վերոյիշեալ նամակը կը խաչաձևուէր Կեդրոնին 8 Յունիս 1962ի պաշտօնագրին հետ որով Եւրոպայի Յանձնաժողովին պաշտօնին վերջ կը տրուէր:

Պատճէնը ղրկուած է արդէն մեր բոլոր Շրջանակներուն և աւելորդ է հոս կրկնել անոր պարունակութիւնը:

Բայց որպէսզի Հ. Բ. Ը. Միութեան Փարիզի մէջ ունեցած յանձնառութիւնները մէկ օրէն միւսը որևէ դժուարութեան չենթարկուէին, նոյն պաշտօնագրով Յանձնաժողովին կը փոխանցուէր, առժամաբար, բնիկ գործերու մատակարարումը, ցնոր տնօրինութիւն, այն յոյսով նաև որ կիրքերը կրնան հանդարտիլ ու Փարիզ վստահութեան կուգայ:

Մեր ա՛յդ յոյսն ալ ի զերև ելաւ:

Աւելին, ամէն չափ ու սահման գլել անցնելով, պաշտօնէ զրկուած Փարիզի Յանձնաժողովը յանդգնութիւնը կ'ունենար չորս կողմ Շրջաբերական մը ևս ղրկելու 30 Յունիս 1962 թուակիր, որով կը հաղորդէ, թէ ցնոր տնօրինութիւն ինք կը ստանձնէ առժամաբար Միութեան Կեդրոնական Վարչութեան մը բոլոր իրաւասութիւնները . . ., և իբր այդ պատգամներ կ'արձակէր Շրջանակներուն . . .:

Այս մեծամոլ և ծիծաղելի նախաձեռնութիւնները բնականաբար անհետևանք կը մնային ընդհանուր անտարբերութեան մէջ և չէր արժեր անոնցմով զբաղիլ:

Բայց կարելի ալ չէր թոյլ տալ որ այս կացութիւնը շարունակուի:

Կեդրոնական Վարչութիւնը, իր 24 Յուլիս 1962 թուակիր պաշտօնագրով, խզեց ամէն յարաբերութիւն Փարիզի այդ անուղղայ Մարմինին հետ, հաստատելով անոնց այլևս պաշտօնանկութիւնը, և ցնոր տնօրինութիւն Փարիզի մէջ կարգեց ներկայացուցիչ մը որուն միջոցաւ պիտի կատարուին նիւթական մեր բոլոր յանձնառութիւնները:

## ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՀՈՒՍԿ ԱՊԱՐԴԻՒՆ ՓՈՐՁ ՄԸ — ԴԱՏ ՈՒ ԴԱՏԱՍՏԱՆ

Հասկացողութեան վերջին փորձ մը տեղի ունեցաւ Ժընևի մէջ, Սեպտեմբեր 1962ին, և Փարիզի գրքոյկը այդ մասին ալ կ'արտայայտուի, այլափոխելով, ըստ սովորական դարձած մեթոտի մը, ամէն իրողութիւն: Հոն գրուած է թէ Միութեանս Նախագահը Տիար Ալեք Մանուկեան, Ժընև ճամբորդած է «պարզապէս փորձելու համար իր քաղաքականութիւնը՝ «բաժնէ որ տիրես», կամ նպատակ ունենալով «Զարեհ Պէյ Նուպարի անունն ալ վարկաբեկել և անոր հեղինակութիւնն ու հմայքը նսեմացնել, անկէ խարէութեամբ կորզելով ստորագրութիւն մը»:

Կը բաւականանանք այս մասին բուն իրողութիւնները միայն ներկայացնելով:

Փարիզի Յանձնաժողովի անդամ ու մտերիմ գործակից Պ. Շարլ Փիլիպոսեան, Ժընևէն, թէ՛ բարեկամի մը միջոցաւ բերանացի և թէ նամակով, Օգոստոս 1962ին, խնդրած էր որ Տիար Ալեք Մանուկեան բարեհաճի Ժընև գալ ուր սրտբաց խօսակցութեան մը ընթացքին հնարաւորութիւն կը տեսնէր ամէն դժուարութիւն բարեկամօրէն հարթելու:

Այս թելադրանքին վրայ էր որ, Նախագահ Տիար Մանուկեան, փոխանակ իր ամառնային արձակուրդը Ամերիկայի մէջ անցընելու, Զուիցերիա մեկնեցաւ, խրախուսուած մանաւանդ այն տեղեկութենէն թէ Սեպտ. 17ին, Միութեանս Ժընեւի փաստաբանին գրասենեակին մէջ տեղի պիտի ունենար յուսադրիչ կարեւոր խօսակցութիւն մը որուն ներկայ պիտի ըլլար նաեւ Գ. Շարլ Փիլիպոսեան, իրենց փաստաբանին հետ։

Անմիջապէս Ժընեւ հասնելուն, Տիար Ալեք Մանուկեան իրազեկ կ'ըլլար փաստաբաններու տեսակցութեան արդիւնքին, որով մեծ հաւանականութիւն կը ներկայանար հարցերը իրաւախոհութեամբ կարգադրելու։

Նոյն նպատակով Տիար Մանուկեան, Սեպտ. 18 և 19ին, շփումներ ունեցաւ Յանձնաժողովին պատասխանատու անդամներէն Շ. Փիլիպոսեանի ու Փարիզէն Տոքթ. Ա. Գիւլիւքեանի և Հ. Թոփալեանի հետ։

Դժբախտաբար, այս անպաշտօն խօսակցութեանց ատեն, ողջմտութեան ամէն կոչ ապարդիւն մնաց։ Եւ որպէսզի ինքզինքնին ձախողանքին և խզումին պատասխանատուութենէն զերծ կացուցանեն, ու արդարացնեն դատի ալ դիմելու անարդարելի քայլ մը, դարձեալ միակողմանի, անհարազատ, «արձանագրութիւն» մը խմբագրած են, զայն ամէն կողմ ցրուած, և յետոյ ալ նոյնութեամբ արտագրած՝ իրենց հրատարակած գրքոյկին մէջ, միշտ նպատակ ունենալով Կեդրոնին դէմ միտքերը պղտորել, յերիւրելով նոյնիսկ թէ Միութեան Նախագահը ընդունած է որ դատի դիմուի . . . ։

Կարեւոր է միայն գիտնալ թէ ո՛ր հիմնական կէտին վրայ ձախողեցաւ հաշտեցողութեան այս հուսկ փորձն ալ։

Փարիզի Յանձնաժողովը պահանջած է ու կը պնդէ միշտ թէ մեր Միութեան 19 Փետրուար 1955ի Ընդհանուր Ժողովը, — ուր որոշուեցաւ Բարեգործականին փոխանցուիլը ամերիկեան իրաւական քաղաքական անձնաւորութեան մը, Զուիցերիականը պահելով հանդերձ առժամանակ կերպով ու Միջին Արեւելքի կալուածներուն համար մանաւանդ, և ուր 2,790 ձայներ, 127 ներկաներով աննախընթաց գումարումի մը բացառիկ արժէքը տուած են ժողովին, — ապօրինի ու անվաւեր հռչակուի, որով և ապօրինի ու անվաւեր կը դառնան անշուշտ Միութեան բոլոր գործառնութիւնները այդ թուականէն ի վեր, Կեդրոնական Վարչական Ժողովին ընտրութիւնն ու պաշտօնավարութիւնը նմանապէս (*)։

Բնականաբար կարելի չէր տեղի տալ Բարեգործականի հանդէպ խիղճէ և գիտակցութենէ զուրկ նման ծայրայեղութեան մը ու մեծամիտ յաւակնոտութեան մը առջև։ Կարելի չէր քաղաքական, կանոնագրական և գործնական բազմաթիւ տեսակէտներով։

Առաջարկեցինք գոնէ հետեւիլ երկու կողմի փաստաբաններուն համաձայնած գործելակերպին, այսինքն՝ Փարիզի առարկութիւններն ու պահանջները ենթարկել Միութեանս բոլոր երկիրներու ներկայացուցիչներէն կազմուած Պատգամաւորական համախմբումի մը նկատառութեան։ Յայտարարեցինք նոյնիսկ թէ Միութիւնը ամբողջապէս Զուիցերիական Ընկերակցութեան դարձնելու իրենց առաջարկը պատրաստ ենք տանելու այդ համախմբումին։ Խորհեցանք, արդարեւ, որ եթէ իսկապէս անկեղծ են, անշահախնդիր, ու լոկ Միութեան ապագային նախանձայուզութենէն կը շարժին, այսպիսի կարգադրութիւն մը բանաւոր պիտի գտնեն։

Անօգուտ անցաւ այս փորձն ալ։

**(Մնացեալը յաջորդիւ՝ 3)**

---

(*) Իսկապէս աննախընթաց գումարում, եւ պիտի բաւէր աչքի առջեւ ունենալ 1906էն սկսեալ Միութեան Ընդհ. Ժողովներուն մասնակցողներուն քանակային ցուցակը, համոզուելու համար այս անհերքելի իրողութիւնը։ Փարիզի գրքոյկին յաւակնութիւնը թէ 1955ին 14.000ի կը յանգէր իրաւասու ձայներու թիւը, օդային յայտարարութիւն մըն է, իբր թէ իրաւական հիմ մը տալու համար իրենց առարկութիւններուն, հոն ուր այդ թուականին Միութեան ամբողջ անդամակցութիւնը այդ թիւին չէր հասնէր։

تصدرها – بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول – صاحب النيافة رئيس الاساقفة هايكازون أبراهاميان

يونيو ١٩٦٣ تطبع في مطبعة دير الارمن – القدس العدد ٦

Proprietor – His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor – Archbishop Haïgazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@